19.02.24 - 19.02.24
14:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան (Դսեղ)

Ս.թ. փետրվարի 19-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում (Դսեղ) տեղի կունենա միջոցառում՝ նվիրված Հովհաննես Թումանյանի 155-ամյակին:

Միջոցառման շրջանակում կներկայացվի Թումանյանի մասին դասախոսություն, ելույթ կունենա ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի երգչախումբը (խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան, գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյան), կհնչեն Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա գրված երգեր, կոմպոզիցիաներ, որոնք կներկայացնեն «Համալսարանական» թատրոն-ստուդիայի (գեղարվեստական ղեկավար՝ Կարինե Դավթյան) սաները:

Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ միջոցառման ավարտին ներկաները նվեր կստանան ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրքերից:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am